

Զինա Գասյան
ԱրՊՀ ասպիրանտ, ՄՄՀ դասախոս,
Արցախ

Անոտացիա: Խոջալուի ազատագրման նախօրեին Արցախի զինված ուժերի կողմից արվել էր հայտարարություն, որ տարածքը լրելու համար աղբեջանցի խաղաղ բնակչությանը տրամադրվել է մարդասիրական միջանցը: Նախքան ռազմական գործողություններ ձեռնարկելը արցախյան կողմը բարձրախոսներով տեղյակ էր պահել տեղացիներին մոտալուս հարձակման մասին և առաջարկել անհապաղ լրել տարածքը: Ի պատասխան, Բարիլի իշխանությունները ցուցաբերել էին խոր անտարբերություն: Խոջալուի անմեղ նահատակները Աղբեջանի իշխանություններ-ընդդիմություն կատաղի մրցապայքարի զոհերն են, որի մասին բազմից փաստել են հենց իրենք՝ նախկին իշխանավորները: Սակայն ներկայումս Խոջալուի դեպքերի առթիվ աղբեջանական պատմարանները և քաղաքական գործիքները խեղաթյուրելով իրականությունը, փորձում են ներկայացնել որպես հայերի վրեժինդրություն:

Բանալի բառեր՝ ԼՂՀ աղբեջանական ազրեսիա, ինքնապաշտպանական ուժեր, Խոջալու (Իվանյան), մեսինեթցի բուրքեր, Այսօ Մութալիբով, Աղդամ (Ակնա), աղբեջանական խեղաթյուրում:

1988 թվականի Արցախի ազատագրական պայքարի արդյունքը եղավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակումը:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատզամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան՝ բոլոր պատզամավորների մասնակցությամբ, որը, արտահայտելով արցախահայության կամքը, ընդունեց որոշում և հոչակագիր ԼՂԻՄ-ի և նրան կից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հոչակելու մասին: Հոչակագրում շարադրված բոլոր սկզբունքային հարցերը հիմնավորված էին, ապացուցված, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակումը պայմանական անհրաժեշտություն է, որը կարող է «փնքնուրույն որոշել իր պայմանական իրավական կարգավիճակը»:[1, էջ 9-10] Այդ փաստաթղթերով արցախահայությունը նորից հաստատեց ազատության համար մինչև վերջ պայքարելու իր վճռականությունը: Ավելի ուշ՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին, արցախահայությունը, օգտվելով ինքնորոշման սահմանադրական իրավունքից, միջազգային դիտորդների ներկայությամբ անցկացրեց անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը:

Սակայն Աղբեջանը ոչ մի կերպ չէր ցանկանում ընդունել այդ իրողությունը: Ուստի պատահակ չէր, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակումից հետո Աղբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում, որով տեղի ունեցածը համարեց դավադրություն Աղբեջանի տարածքային ամբողջականության և անկախության դեմ և հանրապետության ուժային գերատեսչություններին հանձնարարեց խափանել այդ Հոչակագրի իրականացման ցանկացած փորձ՝ պատասխանատվության ենթարկելով դրա հեղինակներին: Միաժամանակ հանրապետության Կազմկոմիտեին հանձնարարվեց լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի բնակչության զինաթափումն արագացնելու ուղղությամբ: Սակայն այս հանձնարարականները անհնար էր իրականացնել, քանի որ մարզի մեծ մասը, գտնվելով արցախյան ուժերի վերահսկողության ներքո, անհասանելի էր Աղբեջանի պաշտոնական անձանց համար:[2, էջ 149]

1991 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Աղբեջանը բացահայտ ազրեսիա սկսեց ԼՂՀ դեմ: Ռմբակոծվում էին հայկական զուտերն ու քաղաքները: Արցախի հայության գոյատևման միակ ելքը աղբեջանական կրակակետերը վերացնելն էր: Այդ նպատակով ստեղծվեցին ինքնապաշտպանական ուժեր:

1991 թ. վերջերին և 1992 թ սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ, որոնց մեջ ընդգրկվեցին շուրջ 1000 մարտիկներ: Այդ կամավորական ջոկատների հարվածների տակ մինչև մայիսի վերջը վնասազերծվեցին թշնամու ավելի քան 40 ռազմական

հենակետեր:[3, էջ 311] Առաջին հերթին ինքնապաշտպանական ուժերը ձեռնամուխ եղան Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացմանը, որոնք սպառնալի վիճակ էին ստեղծել ԼՂՀ մայրաքաղաքի համար:

Դաժան մարտերից հետո ազատագրվեցին Ստեփանակերտի արվարձան Կրկենք: 1992 թ. փետրվարի 10-11-ը թշնամուց ազատագրվեց Մալիբեկով: Վնասագերծվեց Ստեփանակերտը Մարտունու շրջանի հետ կապող ճանապարհի վրա դարանակալած ՕՍՈՆ-ականների որչի վերածված Ղարադարլուն: Մարտունիում տեղակայված ինքնապաշտպանական ջոկատների հիմնական ուժերը ոչնչացրին Ֆիզուլու շրջանի Վեյսալու գյուղի կրակակետերը: [3, էջ 310] Նման հենակետերից էր նաև Խոջալուն, որը փակում էր Ստեփանակերտ – Ասկերան ճանապարհը:

Խոջալուն 20-րդ դարի 80-ական թթ. աղրբեջանարնակ (հիմնականում մեսխեթցի թուրքեր) տարածք էր, ԼՂԻՄ տարածքում բնակչության թվաքանակով Շուշից հետո զբաղեցնում էր երկրորդ տեղը: Տեղակայված լինելով ռազմավարական կարևոր նշանակության վայրում՝ փաստացիորեն Լեռնային Ղարաբաղի տարածքը բաժանում է երկու մասի: Խոջալուի ռազմավարական կարևոր նշանակությունը հասկանում էին նաև աղրբեջանական իշխանությունները, որի պատճառով էլ ձեռնամուխ էին եղել ինչպես ակտիվ շինարարական մեծ աշխատանքներ իրականացնելուն, այնպես էլ տեղի բնակչության ժողովրդագրական պատկերը փոխելուն՝ հանրապետության տարբեր շրջաններից աղրբեջանցիներով տարածքը վերաբերեցնելով [4, էջ 15] իսկ 1989թ.-ից հետո ներառելով նաև Ֆերգանայից թուրք-մեսխեթցիների, ինչը նպաստեց տեղի բնակչության եռապատկմանը (1991թ. դրությամբ Խոջալուի բնակչությունը հասել էր 6300-ի: Բնակչության արհեստական աճի շնորհիվ Խոջալուն Բարվի կողմից ստացավ քաղաքի կարգավիճակ):[5]

Խոջալուն հարմար ռազմական հենակետ էր մի կողմից Ասկերանը, մյուս կողմից Ստեփանակերտը աքցանի մեջ առնելու համար: Հիմնականում մեսխեթցի թուրքերով վերաբնակեցված այդ բնակավայրում էր գտնվում Արցախին արտաքին աշխարհի հետ կապող միակ օդանավակայանը, որն աղրբեջանցիները վերածել էին մինչև ատամները զինված հատուկ նշանակության ջոկատների կենտրոնատեղի: Բարվի իշխանությունները հոգ էին տանում, որ Խոջալուն հարձակողական գենքի մեծ պահեստ ունենա և համապատասխան հրամկացի: [6, էջ 94] Աղրբեջանը գենք, զինամթերք, և միաժամանակ մարդկային լուրջ ռեսուրսներ էր կենտրոնացնում Խոջալուում բանտերից անզամ ազատելով քրեական հանցագործների՝ զինելով ու ջոկատներ կազմած Ղարաբաղ ուղարկելով: Խոջալուի կրակակետերը լուցնելու համար ԼՂՀ ռազմական ուժերը որոշեցին առաջին հերթին հսկողության տակ վերցնել օդանավակայանը: 1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի զիշերը հայկական ջոկատները Աշոտ Ղուլյանի (Բեկոր) զիսավորությամբ հասան առաջավոր դիրքերին: Անակնկալի եկած հակառակորդը նահանջեց:[2, էջ 153], [7, էջ 51] Առանց զոհերի հայ ազատամարտիկներն առաջացան դեպի օդանավակայան: Նրանք զիսավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողել, որպեսզի խոջալուի բնակչիները հեռանային Աղդամ: Փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով 8 զոհ և 20 վիրավոր, լիովին զախցաղեցին Խոջալուում տեղակայված աղրբեջանական ուժերը: [2, էջ 153:] Վերջինիս վերջին հենակետի՝ հինգհարկանի շենքի գրավումով, երեկոյան ժամը 16-ին ամբողջությամբ ազատագրվել էր:[8]

Աղրբեջանական իշխանությունները ոչինչ չեն ձեռնարկել խաղաղ բնակչությանը ռազմական գործողությունների գոտուց տարհանելու համար: Կազմակերպված տարհանման բացակայության պայմաններում Խոջալուի բնակչիները փորձեցին ինքնուրույն դուրս գալ իրավիճակից՝ շարժվելով տարբեր ուղղություններով: Նրանց մի մասը սկսեց առաջանալ Կարկառ գետի հովտով՝ ձախ կողմում թողնելով Ասկերանը: Բարեհաջող կերպով անցնելով հայկական բոլոր բնակչավայրերի և դիրքերի մոտով, նրանք անցնում են նախկին ԼՂԻՄ-ի վարչական սահմանը և հայտնվում աղրբեջանական զինված խմբավորումների կողմից վերահսկվող տարածքում: Հենց այստեղ՝ մարդասիրական միջանցքի ծայրին, Աղդամի մատուցների մոտ էլ՝ Խոջալուից մոտ 11 կմ հեռավորության վրա, զոհվում են Խոջալուից հեռացածների մի մասը: Ամենայն հավանականությամբ զոհ գնալով դիմահար նշանառու կրակոցների: Այդ ժամանակի աղրբեջանցի ուսումնաբրողները և մամուլը հիմնականում հակասական տեղեկատվություններ են հաղորդում Խոջալուի «հարցի» շուրջ, որը վկայում է ներքին քաղաքականության մեջ որոշ քաղաքական ուժերի շահաբաժինների և իշխանության գալու ձգտումների մասին:

Խաղաղ բնակիչների մահվան պատճառ դարձած Խոջալուի դեպքերը Ադրբեջանում իշխանության համար մղված քաղաքական պայքարի արդյունք էր: Իրական պատճառներն առավել համոզիչ ներկայացված են իրադարձությունների ադրբեջանցի մասնակիցների և ականատեսների վկայություններում: Ադրբեջանցի լրագրող Մ. Սաֆարովին վկայում է. «Խոջալուն գրավում էր ռազմավարական կարեւոր դիրք: Խոջալուի կորուստը նշանակում էր Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի քաղաքական ֆիասկո»:[9] Դեռևս, 1991թ. նոյեմբերին Ղարաբաղի Մարտունի շրջանի և Ադրբայջանի սահմանագծում անհասկանալի հանգամանքներում ավիավթարի էր ենթարկվել Ա. Մութալիբովի մերձավորներին և համախոհներին տեղափոխող ադրբեջանական մի ուղղաթիռ: Միակ մարդը, որն այդ օրը իրաժարվեց ուղղաթիռը նստելուց, ընդդիմադիր Ազգային ճակատի կարկառուն ներկայացուցիչ Թամեռլան Ղարաևն էր: Ադրբեջանում գրեթե ապացուցված է համարվում այն փաստը, որ ուղղաթիռը խոցվել է հենց Ազգային ճակատի ներկայացուցիչների կողմից՝ Մութալիբովին պաշտոնանկ անելու նպատակով: Բայց 1991 թվականի վերջին այդ խնդիրը նրանց չհաջողվեց լուծել: Մութալիբովից ձերբագատվելու համար նոր գոհեր պահանջվեցին: Մի քանի ամիս անց, 1992թ. փետրվարի 25-ին, նախապես զգուշացնելով մոտալուտ հարձակման մասին և կոչ անելով դուրս բերել խաղաղ բնակչությանը տրամադրված միջանցքով դեպի Ադրբայց, Արցախի ինքնապաշտպանական ուժերը սկսեցին Խոջալուի ազատազրման գործողությունը: Հաջորդ իսկ օրը Ադրբեջանում արդեն թնդում էր «հայերի կողմից բարբարոսությունների և դաժան սպանդի» և 800-1000 գոհերի մասին լուրը:

ԱԺՃ-Ն անմիջապես պահանջում է Ադրբեջանի Բարձրագույն խորհրդի արտահերթ նիստ, որի ժամանակ Զինգիզ Մուստաֆաևը, ով ադրբեջանցիների կողմից վերահսկվող տարածքներում տեղի ունեցած ոլորտական իրադարձությունից անմիջապես հետո լրացնելու և նկարահանել էր գոհվածների մարմինները, որոնք դեռ այլանդակված չէին, ցուցադրում է Խոջալուի «կոտորածի» կադրերը: Այնուհետև այն ցուցադրվում է Ադրբեջանի տարբեր հեռուստաալիքներով՝ բողոքի ալիք առաջացնելով նախագահի նկատմամբ:

Իսկ ի՞նչ է տեղի ունեցել Խոջալուի մյուս բնակիչների հետ:

Խոջալուի քաղաքապետ Էլման Մամեդովի վկայությամբ, ինքն անձամբ բազմից օգնության է դիմել հանրապետության համապատասխան մարմիններին՝ կանաց, ծերերին և երեխաներին դուրս բերելու համար ուղղաթիռներ ուղարկելու համար, սակայն ապարդյուն:[10] Խոջալուի բնակիչների մյուս մասը իրենց հատկացված «մարդասիրական միջանցքով» Ադրամ գնալու փոխարեն շարժվել են դեպի հայկական վերահսկողության ներքո գտնվող Նախիջևանիկ գյուղը, որն, ըստ Ադրբայց ռադիոկապով իրենց հաղորդած տվյալների, գրավվել էր ադրբեջանական գորամիավորման կողմից: [4, էջ 22] Դեպքերի մասնակից Սուլեյման Աբբասովը վկայել է. «Մենք բնակիչների մի մասի հետ հասանք Նախիջևանիկ գյուղ՝ հուսալով ապաստան գտնել այնտեղ: Մինչ այդ հեռակապով մեզ հաղորդել էին, որ գյուղը խվել է հայ գրոհայիններից»:[11] Այսինքն, Ադրբայց դիտավորյալ սխալ տեղեկություն են տվել Խոջալուն լրած բնակիչներին՝ ուղարկելով նրանց հայերի կողմից պաշտպանվող տարածք: Փետրվարի 29-ին դեպքի վայր ժամանած բազմաթիվ միջազգային լրագրողներ, ինչպես նաև ողջ մնացած Խոջալուի բնակիչները, ենելով դիակների ընկած դիրքից և ստացած վնասվածքներից, վկայում են այն մասին, որ կրակել են ուղիղ նշանառությամբ, և այն էլ ոչ թե Նախիջևանիկ գյուղի, այլ Ադրամի կողմից, որտեղ կենտրոնացած էին Ազգային ժողովրդական ճակատին ենթակա մի շարք գորամիավորումներ և ռազմամթերք: [4, էջ 23-26] Դիակների մեծ մասը գտնվել են Ադրամից 2-3 կմ հեռավորության վրա գտնվող տարածքում: Մարտի 2-ին, նույն լրագրողները հերթական նկարահանումների ժամանակ նկատում են, որ փետրվարի 29-ի համեմատ դիակները նշանակալիորեն փոփոխված են, խոշտանգված և աղավաղված, որը ևս մեկ անգամ բացառում է հայերի մասնակցությունը այդ սպանդին: Այդ տարածքները մինչև 1993 թ. դրությամբ գտնվում էին Ադրբեջանի ռազմական ուժերի հսկողության ներքո:

Փետրվարի 28-ից սկսած՝ Ադրբեջանում Խոջալուի իրադարձությունների մասին հաղորդագրություններն այլ պատկեր ունեն:

Ներքին գործերի նախարարության մամլո ծառայությունը, հասկանալով, որ Խոջալուի կորուստը Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովի համար նշանակում էր քաղաքական ճախողում, հենց նույն օրը տեղեկատվություն տարածեց, որում հաստատվում էր, որ «ԱՊՀ 366-րդ գնդի և հայկական գորքերի հարձակումը Խոջալուի վրա հետ է շարտվել, և եիմա գյուղը ադրբեջանցիների հսկողության ներքո է»: Սակայն այս տեղեկատվությունը հերքեց Ազգային ճակատի

տեղեկատվական ծառայությունը՝ հաղորդելով, որ «Երկու բեռնատար ավտոմեքենա՝ Խոջալուում գոհվածների դիակներով, հասել է Աղդամ»: Կովում զոհվել են նաև Խոջալուի օդանավակայանի պետք, դատախազը և քաղաքապետը: Խոջալուի անկումից հետո Աղրբեջանի մայրաքաղաքում ստեղծվել էր պայթյունավտանգ իրավիճակ...»:[12]

Ներկայացնենք ևս մի հաղորդագրություն: Աղրբեջանի Ազգային խորհուրդը մարտի 3-ին հրավիրված արտահերթ նստաշրջանի ժամանակ ընդունեց մի ուղերձ՝ ուղղված «Աշխարհի խորհրդարաններին», որտեղ կոչ էր անում դատապարտել Ղարաբաղի աղրբեջանցի բնակչության նկատմամբ հայերի կազմակերպած ցեղասպանությունը: Այդ ուղերձում մասնավորապես ասվում է. «Խոջալու քաղաքը 6000-անոց բնակչությամբ ջնջված է երկրի երեսից: Հայաստանի Հանրապետության դեկավարությունը պետական քաղաքականության մակարդակով ահարեկչություն է կատարել»:[13]

Ուշագրավ է նաև ԱԺԾ-ի Աղդամի բաժնի խորհրդի անդամ Ռ. Հաջիևի այն հայտարարությունը, թե իրենք (այսինքն՝ Աղդամի ջոկատները) կարող էին օգնել խոջալուցիներին, քանի որ թե ուժ և թե հնարավորություն ունեին, սակայն երկրի դեկավարներն ուզում էին ցույց տալ ժողովրդին, որ ուժ չունեն և կրկին օգնության դիմելով ԱՊՀ-ի բանակին, վերջինիս օգնությամբ ճնշել նաև ընդդիմությանը: [4, էջ 15] Այսպիսով, ինչպես երևում է, Խոջալուի դեպքերի պատասխանատվությունը Աղրբեջանի իշխանությունը և ընդդիմությունը բարդում էին մեկը մյուսի վրա, սակայն արդյունքը եղավ մարտին նախազահ Մութալիբովի պարտադրված հրաժարականը: Իր տված հարցագրույցներից մեկում Մութալիբովը հաստատում է, որ «1980-ական թթ. վերջերից մինչև 1990-ական թթ. սկզբները Աղրբեջանի առաջին անձանց նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում էր կախված Լեռնային Ղարաբաղում տիրող իրադրությունից» [14], [12]:

Չեխ լրագրող Դանա Մազալովային տված հարցագրույցում Ա. Մութալիբովը նշել է, որ Աղրբեջանում կային ուժեր, ովքեր աշխատում էին նախազահին վարկաբեկել և այդ ուժերը շահագրգոված էին ցույց տալ Խոջալուի կոտորածի կադրերը Բարձրագույն խորհրդում՝ իրեն պաշտոնանկ անելու համար: Այդ ուժը, ըստ Մութալիբովի, կարող էր լինել ԱԺԾ-ն, իսկ հայերի մասնակցությունը Խոջալուի կոտորածին, ինքն անհերետ և անհավանական է համարում:[15]

Մութալիբովի հրաժարականից հետո երկրի ժամանակավոր կառավարումն անցնում է Բարձրագույն խորհրդի նախազահ, ուստամետ կողմնորոշման Յակուբ Մամեդովին, կարծ ժամանակ անց, մայիսի 9-ին, Ղարաբաղում Աղրբեջանի վերահսկողության ներքո գտնվող վերջին հենարանը՝ Շուշին ազատագրվում է հայկական ուժերի կողմից՝ Աղրբեջանի ներքաղաքական իրավիճակի նոր փոփոխությունների առիթ ստեղծելով: Յ. Մամեդովը անմիջապես ճանաչում է Աղրբեջանի Պաշտպանության նախարար Ռ. Ղազիևին՝ որպես ազգի դավաճան՝ մեղադելով նրան Շուշին պաշտպանելու անկարողության և այն դիտավորյալ հայերին «հանձնելու» մեջ:[16, էջ 185]

Մայիսի 14-ին Աղրբեջանում գրումարվում է Բարձրագույն խորհրդի նիստը՝ նվիրված Խոջալուի դեպքերը հետաքննող պատգամավորական հանձնաժողովի գեկույցի լսմանը: Հանձնաժողովը հայտարարում է Մութալիբովի անմեղությունը Խոջալուի անկման գործում և պատգամավորների մեծ մասի քվեարկությամբ վերականգնում Մութալիբովին՝ որպես Աղրբեջանի նախազահ, որն անմիջապես երկրում բոլոր քաղաքական-հասարակական կազմակերպությունների գործունեությունը արգելող և Բարձրում արտակարգ իրավիճակ հաստատող հրաման է տալիս: Մայիսի 15-ին, ԱԺԾ-ն վերջնագիր է ներկայացնում երկրի նախազահին՝ չեղյալ համարել նախորդ օրն ընդունված որոշումները, իսկ ժամեր անց, ԱԺԾ-ի ուժերը՝ պատգամավոր Ի. Համբեդովի գլխավորությամբ, գինված հեղաշրջում են կատարում, որի արդյունքում Ա. Մութալիբովը փախչում է Մուսկա: Իր ձերքակալությունից քիչ առաջ Աղրբեջանի Ազգային անվտանգության նախարար Վազիֆ Շուտեյնովը, ակնարկելով Բարձր ԱԺԾ-ի որոշ քաղաքական գործիչների, հայտարարեց, որ «Բարձր հունվարյան դեպքերը և 1992թ. Խոջալուի դեպքերը միևնույն մարդկանց ձեռքի գործն են»: Խոջալուի սաղրանքին հաջորդած հեղաշրջումից հետո Աղրբեջանի նոր դեկավարությունը Աբուլֆազ Էլշիբեյի գլխավորությամբ, Խոջալուի բնակչությունը նկատմամբ իրենց հրեշավոր հանցագործությունը թաքցնելու համար նախաձեռնեցին իրադարձությունների նպատակառությամբ նենզափոխում՝ ներկայացնելով որպես արցախյան ուժերի կողմից խաղաղ բնակչությունը «կոտորած»: Փաստորեն, Ղարաբաղյան ռազմաճակատում տեղի ունեցած խոշոր իրադարձությունը դառնում է Աղրբեջանի ներքաղաքական ուժերի միջև իշխանական պայքարի թեժացման համար գործիք: Աղրբեջանական քաղաքականությունը պատմության, իրականության խեղաթյուրման միջոցով հանդես է գալիս իրեն

«զոհ»՝ «հայկական ազրեսիայի ձեռքբերում»՝ փորձելով կեղծել իրական դեպքերը և վարկարեկել հայ ժողովրդին միջազգային հանրության առջև: Պաշտոնական Ադրբեջանը մեղադրում է հայերին քաղաքացիական բնակչության վրա կրակ բաց անելու համար: Իրենց գործողություններն արդարացնելու նպատակով Բաքվի իշխանությունները ընտրեցին բոլոր հնարավոր բացատրություններից ամենապարզունակը՝ հայտարարելով, թե հայերը Խոջալուի բնակիչներին միջանցք չեն թողել: Այդ մասին հիշատակում է նաև անզիացի լրագրող Թումաս դե Վաալը:[17, էջ 243-246] Մինչդեռ նրանք մոռանում են, որ պաշտոնանկությունից կարճ ժամանակ անց Ս. Մութալիբովը խոստովանել է, որ «հայերի կողմից միջանցք էր թողնվել, որով մարդիկ կարող էին հեռանալ»:[18] Միջանցքի թեմայով ադրբեջանական պնդումները վերջին տարիների ապացույցների բերի տակ որոշ փոխակերպումներ են ապրել: Եթե սկզբում ժխտվում էր միջանցքի առկայությունը, ապա հետագայում դրա գոյությունն ընդունվում էր, բայց որոշակի վերապահումներով՝ նշելով հանդերձ, որ հայկական կողմը չի նախազգուշացրել գրոհի մասին: Սակայն հումանիտար միջանցքի մասին ադրբեջանցիները տեղեկացվել են հայկական կողմից բարձրախոսների միջոցով:[19][20, էջ 4] Իրականում հնարավոր է, որ բնակչության որոշ մասը իրազեկված չլիներ, սակայն ցանկության դեպքում քաղաքի ղեկավարության համապատասխան աշխատակիցները նրանց կարող էին տեղեկացնել: Հստ ընդունված կարգի, քաղաքի ղեկավարությունը նման դեպքերում պարտավոր էր ոչ միայն տեղեկացնել, այլ նաև կազմակերպել բնակչության էվակուացիան:

Ադրբեջանի պատմաբանները կեղծելով պատմական փաստերը Արցախի ռազմական հաջողությունները Խոջալուում կապում են ռուսական օգնության հետ, մասնավորապես՝ Ստեփանակերտում տեղակայված ԱՊՀ 366-րդ մոտոհրածագային գնդի հետ:

«Վերջին ժամանակներում, - գրում է Էլմիրա Ախունդովան, - Խոջալուում են հաստատվել ֆերգանայից զաղթած թուրք-մեսխեթցիներ ու Հայաստանից արտաքսված ադրբեջանցիներ, որի հետևանքով զյուղաքաղաքը մեծացել է ու հանրապետական նշանակության կարգավիճակ ստացել: Այստեղ բնակչության թիվը հասնում էր 7000-ի: 1992թ. փետրվարի 26-ին հայկական ավազակային խմբավորումները ԱՊՀ «փառապանծ» բանակի օգնությամբ մաքրեցին այս քաղաքը երկրի երեսից»:[20, էջ 4] [21, էջ 22] Շարունակելով նույն կեղծիքը, Հավկա Մամեդովան գրում է. «Ունենալով ինքնապաշտպանական ջոկատ՝ 50-60 ինքնածիզ ու որտորդական հրացան, կտրված լինելով աշխարհից, քաղաքը մինչև ատամները գինված հայ զինվորների շրջափակման մեջ էր հայտնվել, ովքեր ունեին ժամանակակից ծանր հրետանի»:[21, էջ 22], [25 էջ 132-133]

Նշենք, որ հիշատակված մոտոհրածագային գունդը այդ ժամանակ չէր կարող որևէ ռազմական գործողություններ իրականացնել, այն էլ՝ հայերի կողմից հանդես գալով, որովհետև գնդին հրաման էր տրված ձնշել միայն գնդի կողմը ուղղված կրակակետեր՝ առանց գնդի տարածքը լրելու: Ու հենց այդ էր պատճառը, եթե 1992թ. փետրվարի 23-ին ադրբեջանցիները Շուշից և Ստեփանակերտի մերձակայքում գտնվող Զանհասան ադրբեջանարնակ զյուղի հենակայանից հրետակոծեցին Ստեփանակերտում տեղակայված ԱՊՀ զինված ուժերի 366 գնդի տարածքը (ինչի հետևանքով զինվեց 2, վիրավորվեց 8 զինծառայող), այդ առնչությամբ Անդրկովկայան զինվորական օկրուզի հրամանատարությունը հրաման տվեց ձնշել գնդի տարածքը հրթիռակոծող կրակակետերը:[22, էջ 51] Այդ նույն ժամանակ Ադրբեջանի Ազգային ճակատի տեղեկատվական կենտրոնը հաղորդել էր, որ փետրվարի 25-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, 366-րդ ռուսական բանակի մոտոհրածագային գունդը, որը տեղակորված էր Խանքենդիում (Ստեփանակերտում), հայկական զրամիավորումների հետ սկսել էր Խոջալու զյուղի վրա տանկային հարձակում, և որը մինչ այդ երկու շաբաթ գտնվում էր շրջափակման մեջ: Նրանց հավաստմամբ փետրվարի 26-ին՝ առավոտյան ժամը 5-ի սահմաններում, Խոջալուն ընկապ: Ինչպես հաղորդում է Ադրբեջանի ներքին գործերի նախարար Թոֆիկ Քերիմովը, դրա հետևանքով զինվեց են 100 ադրբեջանցի, վիրավորվել են 200-ը: Մի մասն էլ պատսպարվել են շրջակա լեռներում...»:[23]

Ադրբեջանցի պատմաբաններն առանձին գրքերից բացի, Խոջալուի դեպքերին անդրադարձել են նաև Դայրոցական և բուհական դասագրքերում: 2009-2011 թթ. հրատարակված դպրոցական (11-րդ դասարանի համար) դասագրքերում առանձին պարագագի ներկայացվում են Խոջալուի դեպքերը, որոնք վերնագրված են ցեղասպանություն անունով: Դասագրքի հեղինակները կեղծելով պատմական փաստերը, գրում են, որ 1992 թ. փետրվարի 22-ին երեկոյան ժամը 9-ին հայկական ռազմական կազմավորումները ռուսական 366-րդ մեքենայեցված դիվիզիայի հետ միասին հարձակվեցին Խոջալուի վրա: Չափազանցնելով հայակական ուժերի քանակը և նվազեցնելով

աղրբեջանցի պաշտպանների թիվը՝ 150-ի՝ 22 պաշտպաններ Ալիֆա Հաջիևի դեկավարությամբ, երեք անգամ ետ են մղել թշնամու՝ հայերի հարձակումները, որի արդյունքում նա հերոսարար զոհվել է, և համարվում է Աղրբեջանի ազգային հերոս: Ասպա ցույց է տրվում, թե ինչպես հրամանատար Թոփիկ Հուսեյնովը իր մարտական ընկերներով ետ է մղել թշնամու բազմաթիվ զրոհներ և օգնել խաղաղ բնակչությանը դուրս գալ շրջափակումից: Ընկնելով շրջափակման մեջ նա ինքնասպանությամբ վերջ է տալիս իր կյանքին և հետմահու արժանանում Աղրբեջանի ազգային հերոսի կոչման: Խոջալովի զոհերի թիվը չափազանցնելով աղրբեջանցի հեղինակները նշում են, որ ցեղասպանության հետևանքով զոհվել է 613 մարդ, 487-ը ծանր վիրավորվել է, 1275-ը՝ գերի ընկել, 8 ընտանիքներ ի սպառ ոչնչացվել են, իսկ քաղաքն էլ՝ այրվել: Այդ ժամանակ նույնիսկ դիակների հետ վարվեցին շատ դաժանորեն: Ամփոփելով նշում են, որ այդ գործողությունը ամենադաժան գործողությունն է մարդկության դեմ 20-րդ դարում:[24, էջ 11-12] Կեղծելով և խեղաթյուրելով Խոջալովի դեպքերը, նրանք մոռացության են տալիս հայ ազգաբնակչության ցեղասպանությունը Սումգայիթում և Բարվում, որի հետևանքով զոհվեցին հազարավոր մարդիկ, իսկ հազարավոր հայեր արտագաղթեցին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս – 1992թ. հունվար), Փաստաթղթեր, կազմող՝ Հ. Արքահամյան, Եր., 2011:
2. Մինայան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013:
3. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.), Ստեփանակերտ, 2012:
4. Դեմօյն Ղ., Մելիկ-Շահնազարյան Լ., Խոջալինսկое дело: особая папка, Ер., 2003.
5. “Независимая газета”, 18.06.92.
6. Զոհրաբյան Ե., Աղրբեջանի հակահայ ինքորադարականությունը և Խոջալովի խնդիրը համացանցում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2016:
7. Ս. Օհանյան, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Եր., 2012:
8. «Երկիր», 28.02.1992, թիվ 36 (125):
9. “Независимая газета”, 26.02.1992.
10. “Бакинский рабочий”, 03.03.1992.
11. Мегаполис Экспресс, 22.04.1992.
12. “Бакинский рабочий”, 28.02.1992.
13. “Бакинский рабочий”, 03.03.1992.
14. “Политический журнал”, 24. 05. 2004.
15. “Независимая газета”, 02.04.1992.
16. Goltz T., Azerbaijan Diary, Armonk, New York, 1998.
17. Թ. դե Վաալ, Սև այգի: Հայաստանն ու Աղրբեջանը՝ խաղաղության ու պատերազմի միջև, Եր., 2007:
18. “Независимая газета”, 02.04.1992.
19. “Независимая газета”, 18.06.1992:
20. Ахундова Э., Ходжалы. Хроника геноцида, Баку, 1993.
21. Мамедова Х., Ходжалы: Шехиды и Шахиды, Баку, 2004.
22. Հակոբյան Տ., ԼՂՀ հոչակումը և պետական շինարարության գործընթացը, Եր, 2011:
23. Ազերինֆորմ, 26.02.1992.
24. Մինայան Է., Արցախյան շարժման և ԼՂ պատմության կեղծարարությունն ու նենզափոխումը աղրբեջանական դասագրքերում, «ԼՂ դատական իշխանություն իրավական տեղեկատվական-վերլուծական հանդես», Ստեփանակերտ, 2012, 2(6):
25. Մանասյան Ա., Կարաբախский конфликт, ключевые понятия и хроника, Ер., 2005.

РЕЗЮМЕ
Об освещении событий Ходжалу 1992 года
Зина Гасьян

Ключевые слова: НКР, азербайджанская агрессия, силы самообороны, Ходжалу (Иванян), турки-месхетинцы, Аяз Муталибов, Агдам (Акна), азербайджанская фальсификация.

Накануне освобождения Ходжалу вооруженные силы Арцаха объявили о том, что азербайджанским мирным жителям предоставлен гуманитарный коридор для того, чтобы покинуть территорию. Прежде чем начать военные действия, арцахская сторона, используя громкоговорители, оповестила местных жителей о предстоящем наступлении и предложила немедленно покинуть территорию. В ответ бакинские власти проявили полное безразличие. Невинные мученики стали жертвой ожесточенной борьбы между властями Азербайджана и оппозицией, о чём неоднократно свидетельствовали бывшие власти. Но в нынешних ситуациях, азербайджанские историки и политические деятели, искажая реальность вокруг событий в Ходжалу, пытаются преподнести его как месть со стороны армян.

SUMMARY
On the Events of Khojalu in 1992
Zina Gasyan

Key words: NKR, Azerbaijani aggression, forces of self-defence, Khojalu (Ivanyan), Meskhetian Turks, Ayaç Mütalibov, Aghdam (Akna), Azerbaijani falsification.

On the eve of the liberation of Khojalu, the armed forces of Artsakh made a statement, according to which a humanitarian corridor was provided for the Azerbaijani civilians to leave the area. Before starting the military operations, the Artsakh side informed the residents of Khojalu over loudspeakers about the imminent attack and proposed to immediately leave the area. In response to it, the Baku authorities displayed complete indifference. The innocent martyrs of Khojalu became the victims of the fierce struggle between the Azerbaijani authorities and opposition, which has been repeatedly stated by the former officials. However, nowadays, the Azerbaijani historians and politicians distorting the reality, try to present the Khojalu events as an act of vengeance by Armenians.